



ԿՈՎԻԴ-19 համավարակի և պատերազմի ազդեցությունը գենդերային հիմնախնդիրների վրա

Քննարկման ամփոփ վերլուծություն

Պատրաստվել է՝ Սիրան Հովհաննիսյանի կողմից, 30.12.2020

Անցկացման օրը և ժամը՝ 23.12.2020 (12:00-13:45)

Անցկացման վայրը՝ ZOOM

Մասնակիցների թիվը՝ 15 (Ընդհանուր 22)

Երևան 2020 թ.

Ամփոփ տեղեկատվություն մասնակիցների մասին

Հանդիպմանը մասնակցում էին գեներալային փորձագետներ Հայաստանի տարբեր մարզերի և Երևանի կազմակերպություններից, մասնագետներ, որոնք անմիջապես աշխատում են ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ, տրամադրում են հոգեբանական, սոցիալական, իրավական և այլ տիպի աջակցություն կանանց, պատերազմից վերադարձած տղամարդկանց, երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին: Հանդիպումը հնարավորին չափ իր նպատակին ծառայեցնելու համար հրավիրվել էին մասնագետներ բոլոր մարզերի առնվազն մեկ կազմակերպություններից: Հանդիպմանը մասնակցում էին նաև անհատներ՝ ԼՂ/Արցախից տեղափոխված, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ավելի պասիվ մասնակցությամբ:

Փոփոխություններ գործողություններում պայմանավորված ԿՈՎԻԴ-19 և պատերազմի իրողություններով

Հանդիպման ընթացքում մասնակիցները նշեցին, որ հատկապես ԿՈՎԻԴ-19 **համավարակի** պայմաններում աշխատանքները հիմնականում անցել են **առցանց հարթակ**: Տարբեր ծառայություններ մատուցող կանանց կազմակերպությունները կազմակերպել և շարունակում են իրականացնել **կանանց իրավիճակի և կարիքի գնահատումներ**, որոնք հնարավորին չափ բացահայտում են այն խնդիրները, որոնց բախվում են կանայք կապված ճգնաժամի հետ: Կազմակերպություններից Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ ներկայացուցիչը նշեց, որ իրենք շարունակաբար նաև զբաղվել են կանանց **սեռական առողջության և իրավունքի իրացման** հարցերով: Բոլոր կազմակերպությունները նշում էին, որ լոքդաունի իրավիճակում շատ են եղել նաև կանանց **աշխատանքային իրավունքների խախտումները**: Կանանց աջակցման կենտրոն ՀԿ և Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ներկայացուցիչները փաստեցին, որ լոքդաունի ընթացքում **գրանցվել է նաև ընտանեկան բռնության դեպքերի կտրուկ աճ**:

Նմանատիպ և մի շարք այլ խնդիրներ առաջ են եկել նաև **պատերազմի** իրողությամբ պայմանավորված: Ընդհանուր առմամբ կազմակերպությունների մեծ մասի դեպքում **աշխատանքային ուղղությունները փոփոխվել են**. հիմնական գործառույթներին **ավելացել են նաև հումանիտար օգնության կազմակերպման, հավաքման և տրամադրման աշխատանքները**: Հումանիտար օգնության կազմակերպումը **հավելյալ կամավորական աշխատանք է**, որն իրականացվում է վերջինների կողմից: Որոշ դեպքերում կազմակերպությունները, ունենալով հոգեբանական աջակցություն տրամադրելու կարողություններ, ծառայություններ են մատուցել նաև **զինվորներին և որդեկորույս մայրերին** (Օրինակ՝ Շիրակի մարզում): Որոշ կազմակերպություններ, լինելով մարդու իրավունքների ուղղվածությամբ կազմակերպություններ, նաև իրենց վրա են վերցրել շահառուներին օգնության տրամադրումը՝ **պետական աջակցության համար**

նախատեսված դիմումների լրացման և ուղղորդման հետ կապված (Օրինակ՝ Լոռու մարզ): Կարևոր է նաև նշել, որ միայն որոշ կազմակերպությունների դեպքում հատկապես հումանիտար աջակցության տրամադրման համար (տեղահանված ընտանիքիներին, կանանց, երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց) *ավելացել է համագործակցությունը պետական մարմինների, ՏԻՄ-երի հետ* (ինչը ոչ միանշանակ արձագանք ունի մասնակիցների շրջանում): Չնայած, այլ կազմակերպություններ նաև նշում են *պետական մարմինների հետ աշխատանքի անհնարինության մասին՝* պայմանավորված գերծանրաբեռնվածությամբ, անհրաժեշտ տվյալների անհասանելիությամբ և այլն:

Ընդհանուր առմամբ **հումանիտար օգնության մեծ ծավալը՝** սննդի, հագուստի, հիգիենայի պարագաների, ինչպես նաև որոշ դեպքերում ուղղակի ֆինանսական աջակցությունը դարձել է քննարկմանը մասնակից կազմակերպությունների հիմնական գործառույթ, ինչը **մինչ համավարակը և պատերազմը իրենց գործունեության մեջ չի եղել** կամ հիմնական աշխատանքների շարքում գրավել է աննշան տեղ:

Կան արդյո՞ք գործողություններ, որոնք ձեզ համար սովորական էին մինչ համավարակը և պատերազմը, սակայն այժմ չեք կարողանում իրականացնել (հենց համավարակի և պատերազմի պատճառով)

Բռնության մշակույթ և բռնության արդարացում

Քննարկման այս հատվածում հստակ արձանագրվեց **բռնության մշակույթի և տղամարդկանց կողմից բռնության արդարացման** ավելի համատարած բնույթը: Ըստ քննարկման մասնակիցների [կանանց նկատմամբ] բռնությունը արդարացվում և ստիպված հանդուրժվում է **ոչ միայն հենց կանանց** և նրանց մտերիմների (հարևաններ, շրջապատ ևն), այլ **հատկապես պետական** այնպիսի **մարմինների** ներկայացուցիչների կողմից, ինչպիսիք են ոստիկանությունը և դատարանը: Կանայք իրենք էլ *‘ոչ ոք չեն անում’* դիմելու ոստիկանություն, քանի որ ընդունում են դրա նպատակահարմար չլինելը: Հիմնականում **տղամարդիկ** (հատկապես հետպատերազմական իրողությունում) **ընկալվում են որպես ‘հայրենիքի պաշտպաններ’, ‘հերոսներ’, ‘կյանքը զոհաբերողներ’,** ինչի արդյունքում նրանց կարգավիճակը ավելի է բարձրանում հասարակությունում՝ այդպիսով իսկ տանելով դեպի **բռնության արդարացման՝** ի պատասխան կյանքի զոհաբերման պատրաստակամության: Այս առումով ներկայացվեց նաև **բռնության շղթայի դասական տարբերակը՝** բռնությունների հիերարխիան՝ ուժեղից դեպի թույլ:

Պատերազմի բռնությունը տղամարդու նկատմամբ - Տղամարդու բռնությունը կնոջ նկատմամբ - Շարունակական շղթայական բռնություն

Այս համատեքստում նաև **խորանում է կանանց տնտեսական կախվածությունը**, որն արդեն իսկ բավական խորացել էր՝ պայմանավորված ԿՈՎԻԴ-19 համավարակի ուղղակի և անուղղակի ազդեցությամբ/հետևանքներով: Աստիճանաբար նաև **պակասում է պետական**

կառույցների ներկայացուցիչների կողմից էմպատիայի դրսևորումը բռնության ենթարկված կնոջ նկատմամբ (մտքեր Երևանից և Տավուշից): Կանխատեսվում է նաև, որ, *պայմանավորված խաղաղապահների ներկայությամբ* կարող են ավելանալ նաև *սեռական բռնությունների դեպքերը* (հիմք ընդունելով այլ երկրների փորձը, ինչպես նաև սեռական բռնության նկատմամբ անտեսող վերաբերմունքը):

Գործողություններ, որ հնարավոր չէր իրականացնել ճգնաժամային իրավիճակներում

Հանդիպման մասնակիցները նշեցին մի քանի գործառույթներ, որոնք, պայմանավորված ճգնաժամային իրավիճակով հնարավոր չէր իրականացնել (որոշ դեպքերում դեռ մնում է անհնար).

1. *Դիմումներ ուստիկանություն* - Մի կողմից պատերազմի ընթացքում բռնության դեպքերով դիմել հնարավոր չէր, քանի որ *ուստիկաններն իրենք հենց պատերազմում էին*: Մյուս կողմից բռնության արդարացման արդյունքում *բազմակողմանի է մեղադրանքը կնոջ, աջակցող հասարակական կազմակերպության նկատմամբ*, պատերազմից եկած տղամարդու դեմ բողոք ներկայացնելու համար: Այս առումով ավելանում է և կանխատեսվում է, որ էլ *ավելի կխորանա աստելությունն ու թշնամանքը կանանց կազմակերպությունների նկատմամբ*: Մասնակիցներից մեկը նշեց ընտանեկան բռնության մի դեպքի մասին, որի շրջանակներում դատարանը թույլ էր տվել բռնարարին երեխայի հետ տեսակցությունները միայն այն հիմքով, որ վերջինս պատերազմի մասնակից էր՝ առանց հաշվի առնելու հիմնական հանգամանքները:
2. *Հանրային իրազեկման միջոցառումներ* - Մասնակիցներից ոմանք նշեցին նաև, որ թե համավարակով, թե պատերազմով պայմանավորված հնարավոր չի եղել և դեռևս *անհնար է* մնում իրականացնել *հանրային իրազեկման արշավներ, միջոցառումներ* և հանրային խոսել կանանց և գենդերային մի շարք հարցերի շուրջ: Դրանք ոչ միայն ժամանակավրեպ են, այլ նաև կորցրել ու շարունակում են կորցնել իրենց՝ առաջնայնությունը՝ կամ կարևորությունը, քանի որ կանանց բոլոր կազմակերպությունները զբաղված են հենց հումանիտար աջակցման կազմակերպմամբ:
3. *Կանանց առաջնորդության խթանում* - Նման ճգնաժամերի ազդեցությամբ անհնար է դառնում նաև գործողություններ իրականացնել ուղղված կանանց առաջնորդական, հատկապես քաղաքական առաջնորդության և ակտիվության ուղղվածությամբ:
4. *Օրենսդրական փոփոխությունների հապաղում* - Այս իմաստով հապաղել են նաև օրինակ ընտանեկան բռնության մասին օրենքի քրեականացման և Ստամբուլյան կոնվենցիայի ընդունման աշխատանքները: Որոշ առումներով այս պահին այդ օրակարգը անհնար է առաջ տանել:

Գենդերային հիմնախնդիրներից ձեր կարծիքով որո՞նք են այսօր Հայաստանում ամենաառաջնայինները (արձագանքման տեսանկյունից) համավարակի և պատերազմի պայմաններում

Քննարկման ընթացքում փորձեցինք հասկանալ նաև, թե որոնք են այն հիմնախնդիրները, որոնք իրավիճակով պայմանավորված կարող են դիտարկվել ավելի առաջնային: Ստորև առանձնացված են մի քանիսը, որոնք մատնանշվել են քննարկման ընթացքում.

- **Մարդու իրավունքների՝ անկում՝** թե համավարակը, թե պատերազմը անտեսում են մարդու իրավունքների իրացման կարևորությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Այս առումով ավելի է խորանալու գենդերային խտրականությունը:
- **Տղամարդկանց [բռնություն տեսածի] հետ աշխատանք** - այս համատեքստում կանորվում է այն տղամարդկանց հետ համատարած աշխատանքը, ովքեր պատերազմում են եղել, ինչի արդյունքում ունեն լուրջ հոգեբանական և հոգեկան միջամտության կարիք: Միննույն ժամանակ շեշտադրվում է բռնարարի հետ աշխատանքի պրակտիկայի ներմուծումը:
- **Տեղեկատվական դաշտի պատշաճ ապահովում** - Այս առումով նշվում է այն հանգամանքը, որ պատշաճ տեղեկատվություն պետք է մատուցվի հանրությանը պատերազմում ուղղակի և անուղղակի (frontline and backend) կանանց մասնակցության և ներդրման վերաբերյալ: Որոշ առումով նաև պետք է շեշտադրումներ արվեն այն հանգամանքի վրա, որ կանանց շրջանում պատերազմի մասնակցության մոբիլիզացիայի անախադեպ աճ է եղել:
- **Կանանց առաջնորդության ընկալումների հետ աշխատանք** - ըստ քննարկման մասնակիցների իշխանության մոտ գտնվող կանանց ավելի պասիվ վարքը հատկապես պատերազմի ընթացքում աննկատ չի անցնելու: Խոսվեց՝ Շամիրամի Էֆֆեկտի՝ մասին, որի համաձայն անգամ այն դեպքում, երբ կանայք բավարար ներկայացված են ազգային ժողովում (թվում է, թե կա՝ կանանց ֆրակցիա), այնուամենայնիվ կանանց իրավունքներին եղել է քիչ անդրադարձ:
- **Առաջնային արձագանքման կառույցների հետ շարունակական աշխատանք** - քանի որ պետական կառույցների կողմից գենդերային հիմնախնդիրներին սկսվել է էլ ավելի անբավարար արձագանք տրվել, քննարկման մասնակիցները կարծում են, որ պետք է շարունակել ավելի ինտեսիվ աշխատել պետական կառույցների աշխատանքի զգայունացման առումով՝ ուստիկանություն, համայնքային ծառայություններ, դատարաններ և այլն: *Ինչ-որ առումով զգայունությունը կարող են փոխանցել նաև հենց ոլորտի փորձառու ՔՀԿ-ները:*

Ձեր ոլորտի ՔՀԿ-ների ի՞նչ կարողություններ են, որ պետք է զարգացնել կապված համավարակի և պատերազմի ճգնաժամի հետ (ինչպիսի՞ աջակցության կարիք ունեք)

Այս հարցի շուրջ քննարկումը ևս հիմնված էր համավարակի և պատերազմի շրջանակներում կարողությունների զարգացման հարցերի վրա: Այդպես, մասնակիցները նշեցին **հետևյալ կարիքները**, որ քննարկման իրականացման պահին արձագանքի կարիք ունեն.

- Համայնքներում վիրավորների և արդեն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների հետ աշխատելու մասնագիտական հմտությունների տրամադրում և զարգացում,
- Պետական կառույցների հետ երկխոսելու հմտությունների զարգացում հատկապես դժվար իրավիճակում կանանց շահերը պաշտպանելու համար,
- Վերականգման, ռեաբիլիտացիոն մասնագիտական աշխատանք մասնագետների համար մասնագիտական միջամտություններ կազմակերպությունների այն աշխատակիցների համար, որոնք ունեցել են կորուստ համավարակի կամ պատերազմի պատճառով,
- Ճգնաժամային իրավիճակում ընտանեկան բռնության և այլ դեպքերին արձագանքելու կարողությունների տրամադրում, փորձի փոխանակումներ,
- Ճգնաժամային իրավիճակում աշխատելու փորձի համակարգում:

Որքանո՞վ է փոխվել պետական և տեղական կառավարման մարմինների հետ աշխատանքը

Այս հարցի շուրջ քննարկումը ավելի տեղի ունեցավ ոչ այնքան պետական մարմինների հետ աշխատանքի փոփոխության, այլ վերջիններիս աշխատանքում թերացումների մատնաշման ուղղությամբ: Ըստ էության կազմակերպությունները ունեցել **են տարբեր փորձառություններ** պետական կառույցների և ՏԻՄ-երի հետ աշխատանքի հատկապես պատերազմի ընթացքում: **Դրական իմաստով** շեշտադրվում էր որոշ պետական կառույցների պատրաստակամությունը ՔՀԿ-ների հետ համագործակցելու: **Բացասական իմաստով** նշվում էր պետական մարմինների նկատմամբ հիասթափության մասին: Կարևոր է նշել, որ չնայած դժվարություններին, ՔՀԿ-ները շարունակել են համագործակցությունը:

Կան նաև ավելի **հստակ բացթողումներ**, որոնք քննարկման մասնակիցների խոսքի հիման վրա ներկայացվում են ստորև.

- Ընդհանուր առմամբ թերի աշխատանք, սեփական պարտականությունների և **պատասխանատվության գիտակցման բացակայություն,**
- Շահառուների կարիքի բազմակողմանի **գնահատման գործընթացների թերացումներ,**
- Պետական աջակցության նոր տեսակների հետ կապված **փաստաթղթերի լրացման խնդիրներ** (շահառուները նորից դիմում են ՔՀԿ-ներին),

- *Բյուրոկրատիա, երկարատև արձագանում հրատապ խնդիրներին* (օրինակ՝ բնակարանի ապահովում, ֆինանսական աջակցություն և այլն), գործը՝ իրար վրա զգելու՝ շարունակական պրակտիկա,
- *Հանրության հետ կապի պակաս*, որը լրացվում է նորից ՔՀԿ-ների միջոցով, ինչն այնքան էլ նատակահարմար չի դիտարկվում,
- Կանանց և գենդերային հիմնահարցերին վերաբերող կարևոր *օրենսդրական փոփոխությունների նկատմամբ բացասական վերաբերմունք*՝ հիմնված նաև մանիպուլյացիաներին զոհ գնալու, տարբեր վախերի և անձնական հետադիմական դիրքորոշումների վրա,
- *Քաղաքական անորոշություն*, հետագա քայլերի պլանավորման հետ կապված դժվարություններ,

Այս հարցի շուրջ քննարկման ընթացքում նշվեց, որ մեծ էր և դրական արձագանք ուներ հատկապես *Մարդու իրավունքների պաշտպանի* ներդրումը և աշխատանքը, որտեղ կարծես թե բացեր չեն դիտարկվել: Կարևոր էր նաև *ՏԻՄ-երի* հիրավի *ինքնակատավարվելու փորձի դիտարկումը*, երբ վերջիններս, չունենալով շատ աջակցություն ավելի վերին օղակներից ինքնակազմակերպվել և ինքնուրույն են աշխատել: Այստեղ էլ հենց շեշտադրվում է կանանց աստիվ մասնակցությունը ՏԻՄ-երում:

Ո՞ր պետական քաղաքականությունների փոփոխության կամ մշակման կարիք էք տեսնում կապված ճգնաժամային իրավիճակի հետ: Ի՞նչ ներդրում կարող էք դուք կամ ձեր կազմակերպությունը ունենալ այդ գործընթացների հետ կապված

Հանդիպման վերջում հնարավոր եղավ քննարկել պետական քաղաքականությունների մի քանի ուղղություններ, որոնցում մասնակիցներն առաջարկում են փոփոխություններ իրականացել:

- *Արագ արձագանքման պետական ծառայություններ բարելավում*, որոնց թվում են սոցիալական ծառայությունները, առողջապահական ծառայությունները, համայնքապետարանների համապատասխան գործառույթները:
- *Ոստիկանության աշխատանքի բարելավում* - չնայած նախորդ տարիների բավական աշխատանքին, ոստիկանական բաժանմունքների աշխատակիցները կարծրատիպային մոտեցումներ ունեն, որոնք ավելի խորանում և արդարացվում են պայմանավորված հատկապես պատերազմով:
- *Շահառուների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մեխանիզմների մշակում* - Գյություն ունեցող պայմաններում ՔՀԿ-ներից կրկնակի աշխատանք էր դառնում հումանիտար աջակցության տրամադրումը՝ ներառելով շահառուների բացահայտումը: Իհարկե, հասկանալի և ընդունելի է մարդկանց մասին գաղտնի տվյալների հրապարակման սահմանափակումը, սակայն առաջարկվում է հստակ մեխանիզմի մշակում, որով հնարավոր կլինի հրատապ օգնությունը տրամադրել հրատապ նաև ՔՀԿ-ների կողմից:

- **Կարիքի գնահատման խորացված գիտելիքների տրամադրում** - գուցե անհրաժեշտություն կա նոր ձևաչափերի մշակում, որոնք ավելի բազմակողմանի կդիտարկեն շահառուների իրավիճակը և խնդիրները:
- **Ճգնաժամային պայմաններում աշխատելու հատակեցված քաղաքականությունների մշակում**, որոնք վերաբերում են և շեշտադրում են հատկապես գենդերային հիմնախնդիրները:

Նշված առաջարկների շուրջ կազմակերպությունները նշում են գործողությունների իրականացման և հատկապես պետական կառույցների աշխատանքի զգայունությունը բարձրացնելու գործընթացներում մասնակցության պատրաստակամության մասին: